## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<14>> հոկտեմբերի 2022թ. N ՄՈ/615-Ա

ք. Արմավիր

### ՍԱԹԵՆԻԿ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի 2022 թվականի հոկտեմբերի 13-ի զեկուցագիրը, Արցախից տեղահանված տասներկու երեխաների հանդիպումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ կազմակերպելու նպատակով.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սաթենիկ Թովմասյանին 2022 թվականի հոկտեմբերի 13-ին գործուղել քաղաք Երևան:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետ՝ Ա. Համբարձումյան)՝ ապահովել հերթապահ երկու մեքենաների տրամադրումը՝ Արցախից տեղահանված տասներկու երեխաների ճանապարհային տեղափոխումն իրականացնելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ** **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 14.10.2022 09:16:40 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505